

Վիտեմ գիտեմ այս մեր մեղաց պատիժն արդար .  
 Սակայն երկնուց արդարութիւն չունի վըճար .  
 Եւ հրէական ազգին նրման նրզովք յերես  
 Վարէ 'ի դար յուսահատեալ տի գնան հայերս ,  
 Չէ . ողորմածն Մտուած թողել չէ զհայաստան ,  
 Եւ ինքն զինքն է գըլորել յայս խոր զընդան .  
 Երբ որ կամի՝ կանգնի . բայց թող գրնան կրուիք ,  
 Թող գնայ նախանձ . թող գայ սէր , թող միանան սիրաք .  
 Յայնժամ չողբայ զբեզ՝ Վահապետս , հայոց աշխարհ ,  
 Եւլ երանիս կարգայ բերանս հողու հաւսար :  
 Ի յափն հողուս երդումն ուզեմ ձեզնէ ո՛վ հայք ,  
 Եւ յս հառաչանքս ըլլին ձեր ձայն , ձեր այս փափագ ,  
 Եւ հանդարտուկ եղնէ հողեակս երթայ խաղաղ  
 Վերեզմանիս ծագէ արևն հայոց ծիծաղ .  
 Թէ չէ՝ քարչեմ զաղեկըտուր թեղիկ սրտիս  
 Ի սև սարուկն համբուրեմ զհողն որ ծածկէ զիս :  
 Ե՛հ , թող մեռնի ծեր Վահապետ , մտնու տապան .  
 Եւլ թող եղնու յիւր տապանէն իմն հայաստան :

ՆԱՏԱՊԵՏ

ԱԶԳԱՅԻՆ ԽՆԳԻՐ

Յոնիս ամեան հանելուէը , և հայոց Գրեբոն վրայ :

ՅՈՒՆԻՍ ամեան հանելուկը որ Վաւթի քերթողի կամ Մայաղթին ընծայուած է , կը նշանակէ ԳԻՐ . և ինչպէս որ հոն ըսեր ենք՝ ասանկ վարպետ և խրթին գրուածք մը գրչէ գրիչ անցնելով և շատէն չհասկըցուելով՝ շատ փոփոխուեր է և երկընցուցած կամ կարճեցուցած է : Իմանք վեցերորդ տունը չունին , որ աւելորդ ալ է , ոմանք չորրորդն ալ : Իսկ իմաստը կէս մը ընդհանուր գրի վրայ , կէս մ'ալ հայերէն գրերուն վրայ յարմարեցուցած է , և մեզի տեղի կուտայ քանի մը բան գիտելու և քննելու :

Եւ աջին տունը կ'իմացնէ մեր գրերուն մեզի Մտուածմէ տրուիլը : Չեան ամենախալին՝ կրնայ իմացուիլ Խորենացւոյն ըսածը՝ « Թաւթ ձեռին աջոյ » որն որ սրբոյն Սարգսայ մտքին մէջ իբրև քարի մը վրայ կը գրէր : Բարձրեան է

Բարձրան ընծայեաց զիս . կ'երևնայ թէ սուրբն Սարգսայ բարձր տեղ մը առանձնացած էր աղօթելու երբոր աս յայտնութիւնը առաւ . ինչպէս որ Սարգսան պատմիչ կ'աւանդէ թէ Բալուայ լեռը եղաւ աս յայտնութիւնը : Սովսէսի օրինաց տախտակներն առնելուն ալ կրնայ վերաբերուիլ աս խօսքս . մանաւանդ որ մեր հին հարք գրոց և լեզուի վրայ խօսած ատեննին Վարայեցւոց յիշատակներէն չեն կրնար հեռանալ , ինչպէս մեր քերականք ալ Յունաց քերականէն և լեզուէն : Վարձեալ ոչ միայն մեր՝ այլ և օտարազգի սուրբ հարցմէ ոմանք որոնք կարծեցին թէ եբրայեցերէն լեզուն տրուեցաւ Հրէից երբոր Վարմիր ծովէն կ'անցնէին՝ , կ'ըսեն թէ գրերն ալ Մտուած տուաւ Սովսէսի ձեռքով Սինա լեռան վրայ : Եւ երկու մեկնութեանս ալ այսպէս պարծանօք կը վկայէ հայ վարդապետ մը տօմարի մեկնութեան մէջ . « Հաւատ և գիր » և տուամար՝ այս երկու ազգիս միայն

1 Հետևելով Սարգսային ( 2 . Է ) այս խօսքին . « Որպէս ելանէր նա յերկրէն Եգիպտացւոց լեզու » զոր ոչ գիտեր լուաւ :

... Էտ Բսաուած ( Հայոց և Հրեից ), և  
 ... այրոց ազգացդ՝ մարդկան են արա-  
 ... րեալ . գիրս Հայոց՝ աստ՝ ի վերայ վիմի  
 ... հրեղէն աջով, անդ՝ ՚ի տախտակս  
 ... քարեղէնս . զտումարս՝ անդ Սովսէս,  
 ... աստ՝ Հայկն յառաջ քան զնա » :

Երկրորդ տունը՝ որ աւելի բացայայտ  
 կ'ըսէ ուրիշ օրինակ մը՝ Չափ հասակի Է-  
 ... յոյ էր նախ երկու երկրորդսն , աճեցի և զար-  
 ... քացայ , և այժմ է՛մ երեք երկրորդսն . յայտ-  
 ... նի կ'իմացընէ , թէ առաջ քսան և չորս  
 ... գիր կար , սուրբն Ս'եսրովպ տասուեր-  
 ... կու ալ աւելցուց և եղաւ իրեք տասու-  
 ... երկու , որ է երեսունըվեց : Եւ իսուքս  
 ... բանասիրաց ինդիրք մը պիտի ըլլայ ,  
 ... թէ ուրեմն Ս'եսրովպայ գտածը միայն  
 ... տասուերկու գիր էր , և թէ առաջ  
 ... քսանըչորս գիր ունէին հայերը Դա-  
 ... նիելին քով մնացած , ուրեմն հաւանա-  
 ... կան չէ այն կարծիքը որ միայն Եօթը  
 ... ձայնաւորները կ'ընծայէ սրբոյն Ս'ես-  
 ... րովպայ : — Ս'եր կարծիքն այս է . առա-  
 ... կախօսին ըսածը թէ՛ օտար ազգաց քսա-  
 ... նըչորս գրերը կ'իմացընէ և թէ մեր  
 ... Հայոց . ըստ առաջնոյն այսպէս կը մեկ-  
 ... նուի՝ թէ առաջ քսանըչորս գիր ու-  
 ... նէին գլխաւոր ազգեր , վերջը շատը-  
 ... նելով սուրբն Ս'եսրոպ երեսունըվեցի  
 ... հասուց , սեպէ՛ մէկէն տասուերկու ա-  
 ... լելցընելով , սեպէ՛ քիչ քիչ աւելնա-  
 ... լով : Եւ իսուքս Ս'արդան Ս'արդապետ ալ  
 ... իր քերականութեան մէջ ասանկ կ'ը-  
 ... սէ . « Եւ իսուքս երեք վերստին ՚ի չնոր-  
 ... հացն Բսուածոյ գտան զգիրս՝ նախ  
 ... քան զտասն մատեանն Ս'ովսէսի ,  
 ... Կատինք և Պաղեստինք և Երա-  
 ... պիկք հաստատեցին գիրս թուով  
 ... քսան և չորս , զոր թէպէտ և աւելի  
 ... ունին և այլ ազինք՝ ՚ի նոցանէ են ,  
 ... որոշմամբ չնոյ ճեղեալ և աճեցու-  
 ... ցեալ . . . Օ որ ՚ի մերոց թարգման-  
 ... չացն՝ պատճառաւ թանձր լեզուիս  
 ... վեցիցս վեց մերոց տառիցս երեսուն  
 ... և վեց շարեալ գիրս » :

Ար մնայ երկրորդը , թէ արդեօք մեր

1 Հայկայ տումարին վրայ ուրիշ անգամ կը խօս-  
 պինք :

Դանիէլեան կամ՝ Կախամեսրոպեան  
 գրերն ալ քսանըչորս էին , և վրանին  
 տասուերկուք աւելցաւ : Եւ ալ այսպէս  
 ստոյգ կամ հաւանական կ'երևնայ ին-  
 ... ծի , թէպէտ գիտեմ'որ նախնեաց անո-  
 ... ըրոջ խօսքերը և բանասիրաց ազատ կար-  
 ... ծիքը՝ կրնան հակառակ ելլալ . թող  
 ... դատեն հմուտները և փորձերը : Կախ-  
 ... նեաց որ նայինք , ոմանք ամենեւին չեն  
 ... զուրցեր թէ առաջ քանի գիր կար և  
 ... վերջը քանի աւելցաւ . այսպէս են ամե-  
 ... նէն պատկառելի գրիչք , Կորիւն , Խո-  
 ... ընացի , Վազար Փարպեցի , Եզնիկ  
 ... երէց . վերջն ալ ուրիշ պատմիչներ , ինչ-  
 ... պէս Սամուէլ Լ'նեցի , Տօնապատճառք ,  
 ... Հայսմաւուրք , և այլն . ասոնք պարզա-  
 ... պէս կ'իմացընեն թէ երեսունըվեց գիր  
 ... տուաւ մեզի Ս'եսրովպ , ինչպէս Շնոր-  
 ... հային ալ կ'ըսէ վիպասանութեանը  
 ... մէջ . ասոնց միտքն այս է , որովհետեւ  
 ... ինքն սուրբն Ս'եսրովպ թէ առջի գր-  
 ... տուածները և թէ նոր գտածները կար-  
 ... գի և ձևի մտուց , ամէնն ալ երեսունը-  
 ... վեցն ալ իրեն գիւտը սեպուեցան : Եւ այց  
 ... թէ մէկը ըսէ , թէ բոլորն ալ սրբոյն  
 ... Ս'եսրոպայ հնարածն է , մենք չենք  
 ... ընդունիր : Ոմանք ալ կ'ըսեն թէ քսա-  
 ... նըԵօթը գիր գտաւ Դանիէլ Բսուոյն  
 ... քով , Եօթը գիր ալ Ս'եսրոպ աւելցուց .  
 ... այսպէս կ'ըսեն Լ'նանիա Շիրակացին ,  
 ... Ստեփանոս Բսողիկ . միայն թէ չեն զը-  
 ... ըուցեր թէ աս Եօթը գիրը ձայնաւոր-  
 ... ներն էին թէ իսուն : Իսկ ոմանք ա-  
 ... սոնց խօսքէն առած՝ կ'ըսեն թէ սուրբն  
 ... Ս'եսրոպ միայն աս Եօթը ձայնաւոր-  
 ... ներն ստեղծեց . ասոնց հետևողները  
 ... մակաբերութեամբ կ'ըսեն , որովհետեւ  
 ... անուամբ հեղինակ մը չէ զուրցած այս-  
 ... պէս , հապա անանուն հատուկտիր գը-  
 ... ըուածոց մէջ կը կարդանք . ինչպէս՝ « Եւ  
 ... Ս'եսրոպ վարդապետ մեզի գիր Եհան  
 ... Ա , Ե , Ե , Ը , Ո , Ի , Ի » . ուրիշ մ'ալ  
 ... կ'ըսէ . « Ս'եծ Ս'արդապետն Ս'եսրոք .  
 ... Տարօնացին . . . որ և զԵօթն ձայնա-  
 ... լոր գիրսն ընկալաւ յԲսուածոյ » :  
 ... Եւ իսուքս կարծեացս հաստատութիւն կու-  
 ... տան Խորենացոյն օրինակաց ոմանց  
 ... մէջ աս ձայնաւորները գրուած ըլլալը ,

որ մեզի կ'երևնայ թէ աս կարծեաց տէր եղողներէն մէկը մտուցած է : Պարծեալ արևելեաց շատին ձայնաւոր չունենալն ալ ասոնց տեղիք տուած է : Ի այց մենք չենք ընդունիր աս կարծիքը . վասն զի Հայու լեզուն սեմական ըսուած լեզուներուն ազգակից չէ , որ անոնց պէս ալ հարկ սեպենք անձայնաւոր ըլլալը . սանաբրիթը և զէնտը որ աւելի մօտ են մեզի՝ բաւական ձայնաւորներ ունին : — Արկորդ , թէ որ միայն ձայնաւորները պակաս ըլլային՝ դիւրին էր զանոնք լեցնելը և այնչափ աշխատանք պէտք չէր Ս'եսրոպայ , բայց բաղաձայնները և մանաւանդ լծորդները գտնելը և անոնց զանազանութիւնը որոշելը՝ այնչափ դժար էր՝ որ Ս'սուծոյ հրաշիցը կարօտ եղաւ :

Արորդ՝ Ս'արդան իր պատմութեանը մէջ քսանուերկու գիր կ'ըսէ Պանիէլին քով կար , տասնըչորս ալ Ս'եսրով պ գտաւ . աս կարծիքս մօտ է մեր առականութիւն զուրցածին՝ որ տասուերկու գիր կը դնէ աւելցուցած , և թէ որ , ինչպէս որ կը կարծենք , մեծն Պաւլիթ է զրուցողը , ամենէն հին է և անհակառակելի իր վկայութիւնը՝ որն որ ահա այսպէս կը հաստատէ գրիչ մը . “ Քանի գիր գտաւ Ս'եսրաւ պ որ 'ի յԱբբայեցունցն չկայր : — Պն . ժք գիր էր . ամէն լի պիտի ” : Իսկական սեպուի հոս այսչափս աս նիւթիս վրայ :

Արորդ տան իմաստին համար պէտք է մտքերնիս բերենք հիներուն աշխարհացոյցը , որոնք հիմակուանին հակառակ կը նշանէին չորս կողմերը . ճակա-

1 Իսկ անոնց որ բաղաձայնից համար ալ աս հրաշքը աւելորդ կը սեպեն , մենք առանց վիճելու՝ աս կը հարցնենք . Պարոն , արդեօք քու այսօրուան հնչած գնման է սրբոյն Մեսրոպայ հնչմանը . և անոր հնչմանքը իմանալու համար հրաշք մը պէտք է թէ չէ :

2 Այս վկայութիւնս թէպէտ և յՁ գարու մէջ գրուած Ոսկեփորիկէ մը հանած է , բայց կ'երևնայ թէ նշանաւոր աղբիւրէ մը առած է . որովհետև անմիջապէս կարծ կերպով մը կը յիշէ մէկ քանի խափանած գրեր ալ ինչպէս ի ( զիւն ) աւկամ օ , փի փոխանակ Ք գրի . որոնց վրայ Մա. գիտարոս և Նչեցին ալ կը խօսին :

տը՝ ուր որ մենք հիւսիս կը դնենք՝ անոնք արևելքը կը դնէին , աս համեմատութեամբ մէկալ կողմերն ալ . արդնայէ դիմացի գրքիդ վրայ . ահա ըստ հնոց՝ գիրքը արևելքի կողմն է և կը խօսի քեզի կամ քեզմով որ արևմտեան կողմն ես . “ Ի հիսիսոյ 'ի հարա Բար . Բարիս ” , ( աս է լաւ ընթերցուածը որ նոր գտանք ուրիշ օրինակի մէջ ) . և յիրաւի ձախ կողմդ է հիւսիս՝ ուսկից որ գրերը կը խօսեցընես դէպ 'ի հարաւ՝ որ է աջակողմդ : Ի Բարեւոյ խօսի՞ մեռած կենդանեաց մորթերուն վրայ գրուած , այն է մագաղաթը . Յանդուց ճայն արջակէ՞ , գրիչն է՝ երկաթ կամ եղէգ կամ ո՞ր և է նիւթ , որ ձայն հանելու պատճառ կ'ըլլան կարդալով :

Չորրորդ տունը կ'իմացընէ թէ հանելուկին նիւթը իրեք գրով է , ինչպէս է ԳԻՐ . և թէ ո՞ր գրերն է անոնք ալ կը ցուցընէ . Արբեան 'ի Բակէն , այսինքն միաւորաց մէջէն երրորդ գիրը՝ որ է Գ . Հնգեան 'ի հալարէ , այսինքն հազարաւորաց մէջէն հինգերորդը որ է Ր . Ս'եան 'ի հնգեանէ . ասիկայ թէ որ սխալ գրուած չէ , չենք կրնար առջի երկուքին պէս ի գրին յարմարցընել , թէպէտ և յայտնապէս անոր համար ըսուած է :

Հինգերորդ տունը կ'իմացընէ թէ գիրը կամ գիրքը սնունդ կ'առնէ թանաքէն որ լոյծ կամ ջրային է և ջրով բաղադրած . բայց մահն ալ անկէց է՝ որովհետև ջրով կ'աւրուի : Իսկ վերջի կտորը աւելի լաւ գրուած է նոր օրինակին մէջ . Ի հրոյ զարհոտի՞մ ե՞ 'ի ջրոյ սասանի՞մ . Բայց նսպեալ 'ի վէճս արհամարհէ՞մ զնոսս . թէ ջուր և թէ կրակ ապականիչ են գրոց , ինչպէս լաւ , մանաւանդ թէ շատ ցաւալի կերպով փորձեր են Հայոց ձեռագիր մատեանները . բայց թէ որ քարի վրայ փորուած ըլլայ՝ ոչ ջուր կ'ապականէ ոչ կրակ , ինչպէս որ Ս'անայ բերդին արձանագրութիւնները 3600 տարի է ջուրեր և հուրեր արհամարհելով կեցեր են . ընդհակառակն չէ թէ միայն կակուղ նիւթոց վրայ՝ հապա մետաղաց վրայ ալ գծած ըլլային , չէին կրնար այնչափ

գիմանալ օրուն ազգեցութեանցը :

Ուղղով վեցերորդ յայտնի և աւելորդ տունը , յիշենք որ ուրիշ օրինակներ՝ Ա և Բ տանը մէջ՝ աս ալ կ'աւելցրնեն . ( Յորժամ ծնաւ զիս Տայր իմ՝ ես իմաստնացողի զնա . աս ալ թէ սրբոյն Ս' ետրովայ վրայ չմեկնենք , կրնանք իմանալ գրքին վրայ , որ քանի որ չէ ծնած գրերը՝ տգէտ է , վրան իմաստ մ'ալ չկայ . երբ որ կը ծնանի զանոնք՝ իմաստութիւն կ'ունենայ :

Ուրիշ հանելուկ մ'ալ կայ Ղաւթի ընծայուած որ ուրիշ անգամ կ'ընծայենք հետաքրքրաց . աս ամուս համար լենք զայս , ուրիշ ազգային հեղինակէ մը :

Տ . Գ . Մ

Տ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

ԵՐԿՈՒՍ ընդ իրար կրուին ,  
Մէկ 'ի մէկ իսկի չընմանին .  
Մէկ այլ 'ի նոցա միջին  
էր մեռած անկած 'ի տեղին :  
Լ. յնոք որ ըզկուին արին՝  
Շատ արիւն 'ի վայր վաթեցին .  
Ի յայն արենէ ցօղին  
Շունչ տուաւ անկած մեռելին .  
Ծեր մ'ալ բարեխօս բերին  
Որ եպագ գերես մեռելին ,  
Եւ յայն համբուրէ ծերին  
Լոյս ծագեաց մըթան գիշերին :

1 Կը յիշեցրնէ Ենոզայ խեցեղէն և պղնձեղէն սիւներն ալ . որոնց վրայ գրեր էր իր և իրմէ առջի նահապետաց աւանդութիւնները . որպէս զի թէ որ երկիրս ջրով ապականի՝ մէկը մնայ , թէ որ կրակով մէկալը . « Սորա երկուքն յարձանագրու . » թեանցն ընդգէմ՝ երկուցն հանդերձելոցն . որ . » պէս ասէ Յովնեպոս , թէպէտ և ուրն անյայտ » . Խորեն Ա . 7 :

Ա Ռ Ա Կ

ԽՆԾԳԵՏՄԱՆ խրատեր զորգիմն ոչ խտորնակս ընթանալ . և նորա ասէն . Ի քէն տեսանեմք զխտորնակն , և ուստի՝ ուսանիմք զուղիղն :

Բ Ն Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Բ Ն Ա Կ Ա Ն Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս' անարիւ :

ՈՒՐԻՇԻՆ չարիք ընելու վնաս հասցրնելու ախորժակը՝ կենդանեաց գծազրութեանը վրայ ալ կ'երևնայ , և անով իրենց բնաւորութիւնը կ'իմացուի . աղէկ որ որչափ չարիք որ կը փափաքին ընել նոյնչափ չեն կրնար , հասցա իրենց մարմնական ուժին համեմատ : Ս' նշանը ամէն կենդանիներէն աւելի մանարիւ ըսուած կատաղի կապկին երեսը կը տեսնուի , որ կապիկներու ցեղին մէջ ամենէն ուժովն ու մեծն է , և շանափը ալ կ'ըսուի , որովհետեւ գլուխը շան գլխին նման է : Ս' արմինը մարդու հաստութեամբ կայ , երբեմն ալ ինչուան հինգ օտնաչափ երկայնութիւն կ'ունենայ . յաղթանգամ ու ջղոտ է , մանաւանդ կուրծքը . գլուխը որ թանձրամիս ու երկայնաձև է՝ անմիջապէս ուսերուն կպած է . չորս սրունքները նոյն բարձրութիւնը ունին , և երկայն բարակ ու ջղոտ են . թաթերը մարդուս ձեռքին կը նմանին , և ամէնքն ալ հինգ հինգ մատ ունին , որոնց վրայ երկայն , բարակ , սուր և մէջտեղերնին խոր եղունգներ կան . բերանն ալ թէ ուժի և թէ մեծութեան կողմանէ ուրիշ մնակեր գազաններէն վար չմնար . իսկ մարմնոյն ուժը հաւասար է խիստ զօրաւոր մարդու մը ուժին : Ս' այց որովհետեւ այնպիսի անզգամ բնաւորութիւն մը ունի որ ինչ որ գիմացը ելլէ կ'ուզէ կտորել ջարդել , ասով իրեն մարմնական կարողութիւնը աւելի կը գրգռի : Ուրիշ գազաններուն պէս՝ ուտելու կամ ինքրզինքը պաշտպանելու համար չսպաններ գիմացը ելլողը , հասցա պարզապէս անոր չարիք ընելու համար . վասն զի շատ անգամ այնպիսի կենդանիներ կը սպաննէ՝ որոնցմէ ամենեւին վախ չունի և չուտեր : Ս' այց ի-